

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՋՈՒՂԱՅԻ ԲԱՐԲԱՌԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ  
ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՀԱՅԵՑԱԿԵՏՈՎ**

**Վարդանյան Արտակ**

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

artva@list.ru

DOI: 10.54503/978-9939-970-08-0-189

**Բանալի բառեր.** Նախիջևանի տարածք, Գողթն գավառ, Ջուղայի բարբառ, Ջուղա գյուղի խոսվածք, Նոր Ջուղայի խոսվածք, բարբառային հատկանիշներ, հատկանիշների փոխազդեցություն:

**Նախաբան**

Նախիջևանի տարածքի կորուսյալ ութ բարբառների մեջ առանձնահատուկ տեղ է ունեցել Ջուղայի բարբառը, որը մինչև 1605 թվականի շահաբքայան հայտնի բռնագաղթը կիրառվել է բնօրրանում՝ 20-40 հազար բնակչություն ունեցող, նշանավոր առևտրատնտեսական և մշակութային կենտրոն Ջուղա քաղաքում, ինչպես նաև մերձակա Վարդուտ գյուղում:

Պատմական Վասպուրական աշխարհի Գողթն գավառի նշանավոր Ջուղա քաղաքը 1603-1618 թթ. թուրք-պարսկական պատերազմի ընթացքում առաջացած իրավիճակում Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթից հետո որոշ ժամանակ մնացել է ամայի, այնուհետև, երբ տարածքը վերանվաճվել է պարսիկների կողմից, սկսել է մասամբ վերաբնակեցվել: Ավելին, տեղեկություններ կան, որ տարագրությունից այս կամ այն կերպ խուսափած ջուղայեցիները Նոր Ջուղայից փախած-վերադարձած իրենց հայրենակիցների հետ վերահաստատվել են հայրենի քաղաքում՝ նախ ապաստան

---

<sup>1</sup> **Ղ. Ալիշան,** *Միսական, տեղագրություն Միսեաց աշխարհի,* Վենետիկ-Ս. Ղազար, 1893, էջ 410-413:

գտնելով քաղաքային կիսավեր ծածկած շուկայում, քարավանատանը, այնուհետև նորոգելով և բնակեցնելով որոշ կիսականգուն տներ, վերականգնելով սրբավայրերի մի մասը: Ըստ ավանդության՝ այնտեղ վերաբնակված հիմնական տոհմերն են եղել բնիկ ջուղայեցիների Տեր Պողոսենց, Պարոն Փանոսենց, Խոջա Նազարենց, Երեսփոխան Թումոյենց, Տանուտեր Ֆրանգուլենց, Պարոն Աթանեսենց և Խոջա Ծատուրենց յոթ տները:

Ջուղայի վերականգնման այս շրջանի մասին են վկայում նաև եկեղեցիների և վանքերի մերձակայքի տապանաքարերի 17-19-րդ դարերի արձանագրությունները<sup>3</sup>, ինչպես նաև 1645 թվականին Ջուղայում ընդօրինակված մի ձեռագիր, որի գրիչը հիշատակել է. «Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս Յովհաննու ի թվականիս Հայոց ՌԴԴ ի գրչիս ձեռամբ դպիր Մարգարի, ի գեօղն Ջուղայ...»<sup>4</sup>:

1848 թվականին, երբ տարածքն արդեն Ռուսական կայսրության մաս էր, դեռևս կիսավեր վիճակում գտնվող Ջուղայում վերահաստատված բնակիչները քաղաքի տարածքից ոչ հեռու՝ Արաքս և Երնջակ գետերի միախառնման մասում հիմնեցին Ջուղա գյուղը: Առավելապես ջուղայեցիների սերունդներով բնակեցված բնակավայրում մինչև անցյալ դարի 80-ական թվականները դեռևս կիրառական էր Ջուղայի բարբառը՝ որոշակի փոփոխություններով: Իսկ 1988 թվականի դեկտեմբերին աղդբեջանցիները Ջուղայից արտաքսեցին վերջին հայ ընտանիքը՝ 80-ամյա Մարիամ Եղյանին և նրա դստերը՝ Ռոզային: Ջուղայի բարբառը մասնակիորեն կիրառվում էր նաև 19-րդ դարի երկրորդ կեսին Ջուղա գյուղից մի

---

<sup>2</sup> Ա. Այվազյան, *Ջուղա*, Ե., 1984, էջ 17-19:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու*, հ. Ա (կազմեց Արտաւազդ արք. Սիւրմէան), Փարիզ, 1950, էջ 33:

<sup>5</sup> Ա. Բախտամյան, *Հին Ջուղայի վերջին հայը (տեսանյութ)*, 2021, <https://m.ok.ru/video/232766179844>:

քանի կիլոմետր դեպի արևելք հիմնված Ջուֆա սահմանային քաղաքում, որը Ջուղայի բարբառով Կրախտին («սահման») էր կոչվում: Մակայն տարբեր բարբառներով խոսող և աճող բնակչությամբ այս քաղաքում ընդհանուր խոսակցական հայերեն այդպես էլ չձևավորվեց:

Նախիջևանի տարածքում երբեմն կողք կողքի կամ միևնույն բնակավայրում համատեղ գործառող բարբառները, այնուամենայնիվ, հետաքրքիր փոխազդեցական առնչություններ են դրսևորել: Դրանցից մեկն էլ Ջուղա գյուղի խոսվածքն է, որի առանձնահատկությունների ուսումնասիրությունն էլ սույն հոդվածի նպատակն է:

Հոդվածի արդիականությունը նրանում է, որ վերհանվում են այսօր արդեն իսպառ հայաթափված Նախիջևանի տարածքի բարբառային իրողությունները: Նորույթը չուսումնասիրված այս առնչություններն առաջին անգամ ներկայացնելն է: Հետազոտությունն իրականացվել է համաժամանակյա և տարաժամանակյա մեթոդներով:

### **Դիտարկումներ**

Ըստ ժողովրդական ավանդության՝ Ջուղա քաղաքը հիմնադրել են Անիի կործանումից հետո տարածքում հաստատված անեցերը, ուստի տեղանունը ստուգաբանվում է որպես Անիի ճյուղ («ճյուղ ա»): Մակայն Ջուղայի մասին հիշատակել է դեռևս Քերթոդահայր Մովսես Խորենացին՝ իր «Պատմութիւն Հայոց» երկում՝ Ք. ա. 5-րդ դարում հայոց Տիգրան Երվանդյան թագավորի հիմնադրած

---

<sup>6</sup> Ա. Վարդանեան, *Նախիջևանի բարբառային քարտեզը*, Հանդես ամսօրեայ, հ. 1-12, Վիեննա, 2000, էջ 457-470:

<sup>7</sup> Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 4, Ե., 1986 էջ 426-427:

քաղաքների շարքում<sup>8</sup>: Պատմաբան-մշակութաբան Արգամ Այվազյանը հնարավոր է համարում տեղանվան ցեղանվանական ծագումը:

Ըստ հայ բարբառների ավանդական միահատկանիշ դասակարգման՝ Ջուղայի բարբառը պատկանում է հայերենի բարբառների «Ում» ճյուղին և ունի բաղաձայնների քառաշարք համակարգ, ըստ Գևորգ Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ հայերենի բարբառների արևելյան խմբակցության հյուսիսարևելյան կամ Արարատյան բարբառախմբի բարբառ է:

Հետաքրքրական է, սակայն, որ եթե Իրանի Սպահան քաղաքի մերձակա Նոր Ջուղայում (մասամբ՝ նաև Իրանի Շիրազ քաղաքում, անցյալում՝ նաև Հնդկաստանի Կալկաթա, Ագրա քաղաքներում) գրեթե անաղարտորեն պահպանվել է Ջուղայի հին բարբառը<sup>10</sup>, ապա Ջուղա գյուղում, բարբառամիջյան շփումների արդյունքում, այն կորցրել է որոշ էական հատկանիշներ<sup>11</sup>: Դա տեղի է ունեցել ինչպես նոր բնակավայրի խառը բնակչություն ունենալու, այնպես էլ շրջակա բարբառների ու խոսվածքների հետ փոխազդեցության հետևանքով:

Ամենաակնառու փոփոխությունը տեղի է ունեցել բաղաձայնական համակարգում: Ջուղայի հին բարբառին բնորոշ քառաշարք բաղաձայնական համակարգը դարձել է եռաշարք՝ բառասկզբի շնչեղ ձայնեղները դարձել են խուլեր, իսկ բառամիջում և բառավերջում՝ պարզ ձայնեղներ կամ խուլեր (բամբակ > *բ'ամբակ* > *պամբակ*, բանջար > *բ'անջար* > *պանջար*, բարակ > *բ'արակ* > *պարակ*, բարձ > *բ'արձ* > *պարց*, գանգատ > *գ'անգ'ատ* > *կանգատ*,

---

<sup>8</sup> Մ. Խոբենացի, *Պատմութիւն Հայոց*, Ե., 1981, էջ 98:

<sup>9</sup> Ա. Այվազյան, նշվ. աշխ., էջ 4:

<sup>10</sup> Հ. Աճառեան, *Քննութիւն Նոր-Ջուղայի բարբառի*, Ե., 1940, էջ 1-41:

<sup>11</sup> Ջուղայի խոսվածքը ՀՀԱ նյութերի հավաքման ծրագրով 1981 թվականին գրացել է Դ. Կոստանդյանը (ՀՀ ԳԱԱ ԼԻ արխիվ, տետր հ. 174):

գարուն > *q'արունք* > *կարունք*, դանակ > *q'անակ* > *տանակ*, դատարկ > *q'արդ'ակ* > *տարդակ*, ձագ > *ձ'աք* > *ծաք*, ձախ > *ձ'ախ* > *ծախ*, ջրաղաց > *ջ'աղաց* > *ճաղաց*): Ի դեպ, բառասկզբի ձայնեղների խլացման երևույթը բնորոշ է տարածաշրջանի գրեթե բոլոր բարբառներին (Արարատյան բարբառի Նախիջևանի<sup>12</sup> և Աստապատի<sup>13</sup> խոսվածքներ, Ճահուկ-Վայքի միջբարբառ<sup>14</sup>, Խոյի<sup>15</sup>, Արցախ-Սյունիքի<sup>16</sup> բարբառների նախիջևանյան խոսվածքներ և այլն):

*Ե* և *ռ* երկբարբառները դրսևորվում են ոչ համակարգված՝ պահպանվել են մասամբ (գող > *q'ոդ* > *կոդ*, բող > *բ'ոխլ* > *պոխլ*, գործ > *q'ործ* > *կործ*, կորել > *կորել* > *կորիլ*, փոխել > *փոխել* > *փոխիլ*, ոչ > *ոնչ* > *վոնչ*, ործ > *վոռց* > *վոռց*, բայց՝ թոք > *թոք* > *թօք*, նոր > նոր > նօր, ոսկի > *վոսկի* > *վնսկի*, թողուլ > *թողալ* > *թօղալ*, նան՝ ձոր > *ձ'որ* > *ծրօր*, մոմ > *մոմ* > *մրօմ* // *մուօմ*; վեց > *վեց* > *վեց*, տեղ > տեղ > տեղ, կեռիք > *կեռիք* > *կեռիք*, կշեռք > *քրշեռք* > *քրշեռք*, բայց՝ բերել > *բ'երել* > *պերիլ*, փեսա > *փեսա* > *փէս*<sup>o</sup>, երես > *իրես* > *իրէս*, տերև > *տիրել* > *տիրել*):

Նկատվում են Ջուղայի բարբառին ոչ բնորոշ քմային ձայնավորներ՝ ոչ միայն փոխառյալ բառերում (*դսնվսն* («ուղտ»), *ջսնսնվսն*

<sup>12</sup> **Ա. Վարդանյան**, *Նախիջևան քաղաքի խոսվածքը*. – «Ջահուկյանական ընթերցումներ» հանդես, 1, Ե., 2023, էջ 70-83: Նախիջևան քաղաքի և Այլապատ գյուղի խոսվածքը ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով 1987-1991 թթ. գրանցել է Ա. Վարդանյանը (ՀՀ ԳԱԱ ԼԻ արխիվ, տետր հ. 445,):

<sup>13</sup> **Պ. Պողոսյան**, *Աստապատ. արաքսամերձ հայաշխարհ*, Ե., 2005, էջ 92-97: Նախիջևանի Աստապատ գյուղի խոսվածքը ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով 1983 թ. գրանցել է Հ. Խաչատրյանը (ՀՀ ԳԱԱ ԼԻ արխիվ, տետր հ. 235):

<sup>14</sup> **Ա. Վարդանյան**, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004, էջ 23-24:

<sup>15</sup> Նախիջևանի Նորս գյուղի խոսվածքը ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով 1980 թվականին գրացել է Լ. Բաբայանը (ՀՀ ԳԱԱ ԼԻ արխիվ, տետր հ. 144):

<sup>16</sup> **Ա. Վարդանյան**, *Արցախ-Սյունիքի խոսվածքներ Նախիջևանի տարածքում*. – «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութեր» ժողովածու, Ե., 2022, էջ 236-252:

(«գազան»), *քսննդիր* («պարան»), *փէխսմբար* («եգիպտացորեն»), *շսնֆտսնլ* («դեղձ»), *սոփրո* («ոչխարի, այծի հոտ»), *քօմուր* («ածուխ»), *յօնջսն* («կորնգան»), այլն բնիկ հայերեն բառերում (*վօշսնր*, *քանի*, *սնդիս*, *կոնգ(իկ)*, *խրքովսնց*, *սմիլ* («արժել, արժենալ»), *վօսկի*, *ծսնրսնլ*, *նոգիլ*, *լվսնալ*):

Թեև պահպանվել է բարբառին խիստ բնորոշ *h* > *խ* հնչյունափոխությունը (հող > *խող*, համ > *խամ*, հալել > *խալիլ*, հոր > *խոր*, հինել > *խինիլ*, հարցանել > *խարցընիլ*), այնուամենայնիվ, կան որոշ բացառություններ (հազար > *հազար*, հայ > *հայ*, հիւանդ > *հիվանդ*, հոգի > *հօփի*):

Բառասկզբի հինհայերենյան *խ*-ի դիմաց, ի տարբերություն հին բարբառի *խ*-ի, Ջուղա գյուղի խոսվածքում առկա է *h* (յղի > յուղի > հուղի, յիշոց > յուշունց > հունչհունչ, յաղթել > յախթել > հախթիլ):

Ի դեպ, հետաքրքրական է, որ որոշ թեք ձևերում ի հայտ է գալիս նաև *ք* > *չ* հնչյունափոխություն (ցորեն > *ցօրէն* - սեռ.՝ *ցօյնի*, աղաջուր > *աղաճուր* - սեռ.՝ *աղաճըյնի*, եղբայր > *ախպէր* - հոգն.՝ *ախպէրք*, տալգր > *տէքրր* - հոգն.՝ *տէքըյնի*, կարմիր > *կարմիր* - *կայմըրուկ* (< կարմրուկ), որը բնորոշ չէ տարածքի բարբառներից ոչ մեկին, այլ առավելապես՝ արևմտյան բարբառներին (Խոտրջուր, Համշեն, Տրապիզոն և այլն): Ի դեպ, Համշենի բարբառում կանոնավորապես ուղիղ ձևերում առկա հիշյալ հնչյունափոխությունը (արծաթ > *այձաթ*, արածել > *այձուշ*, մրջին > *մէշյոււմ*, արջ > *այշ* և այլն) երբեմն դրսևորվում է հենց միայն թեք ձևերում, օրինակ՝ երազ > *նէրազ*, սեռ.՝ *նէրզի*, ցորեան > *ցօրին*, սեռ.՝ *ցօյնի* գարուն > կարուն, սեռ.՝ կայնօն, երես > *էրէս*, սեռ.՝ *էյսի* և այլն)<sup>17</sup>:

<sup>17</sup> Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947, էջ 64-65:

Խոսվածքում փոխվել է բառային շեշտի դիրքը՝ վերջնական-  
կայինից դառնալով վերջնթեր՝ *մատանի՝ > մատա՛նի, ծարավե՛լ > ծարա՛վիլ, հավատա՛լ > հավա՛տալ, բ՛անցըրանա՛լ > պարցըրա՛նալ*  
և այլն:

Ջուղայի բարբառի ամենակիրառական հոգնակերտի՝ *ներ*  
մասնիկի դիմաց առկա է *նի* (խնձոր > *խընձոր-խընձորներ* >  
*խընձորնի*, քաղաք > *քաղաք-քաղաքներ* > *քաղաքնի*, առու > *հառու-  
հառվըներ* > *հառվընի*, նապաստակ > *ալապօստրակ-  
ալապօստրակներ* > *ալապօստրակնի*):

Ել լծորդության բայերը անորոշում ունեն *իլ* վերջավորու-  
թյունը (հինել > *խինել* > *խինիլ*, բերել > *բ՛երել* > *պերիլ*, յաջողել >  
*յաջողել* > *աճօղիլ*, հալել > *խալել* > *խալիլ*, պահել > *պախել* >  
*պախիլ*):

Անկատար դերբայի *ոււ* վերջավորության դիմաց առկա է *ըւ*  
(*ուզում-ուզըւ, մըտնում-մըտըւ, յըլնում-ընըւ, դ՛ընում-տընըւ*):

Միավանկ բայերի սահմանական եղանակի *ման* վերջա-  
վորությամբ կազմությունները (*գ՛ոլման ամ* > *կոլման ամ* («գալիս  
եմ»), *տոլման ամ* > *տօլման ամ* («տալիս եմ»), պահպանվել էին մինչև  
անցյալ դարի կեսերը, այնուհետև փոխարինվել *ըւ*-ով ձևերով  
(*կոլըւ ըւ, տօլըւ ըւ*)<sup>18</sup>:

Բառապաշարային ակնհայտ ընդհանրությունների (*ճաղաչ-  
ճաղաչ, ճնջուխ-ճնջուխ* («ճնձողուկ»), *վառնէկ-վառնիկ* («վառեկ»),  
*փերփերան-փիփերան* («դանդուռ»), *ճամփա-ճամբախ, կուրայի-  
կուրահի* («կրիա»), *խլէգ-խլէզուկ*) կողքին առկա են նաև որոշակի

---

<sup>18</sup> Հիշյալ բարբառային հատկանիշի գործառման մասին է խոսում մի մասնավոր  
պատմություն: Նախիջևանի Ազնաբեդ գյուղում՝ տողերիս հեղինակի ծննդավայ-  
րում, մինչև 1950-ական թվականները ապրում էր մի տարեց, միայնակ ջուղայեցի,  
որին համագյուղացիները *Գօլման* մականունով էին կոչում. պատճառը, անշուշտ,  
ազնաբեդցիներին խորթ՝ նրա մայրենի բարբառում դեռևս կիրառվող հիշյալ  
բայաձևն էր:

տարբերություններ (ջորի-ղաթըր, կճուճ-ղ՞ղ՞// մաշնակ, սկեսրօր-պաղթօն («սկեսրայր»), բ՛աղաջ՛-թ՞փթ՞փա («բաղարջ») և այլն:

### **Եզրակացություն**

Այսպիսով, բնօրրանում իր գործառույթը պահպանած Ջուղա գյուղի խոսվածքը, ի տարբերություն Նոր Ջուղայի ավանդական խոսվածքի, կրել է հնչյունաբանական, ձևաբանական և բառապաշարային մի շարք շեղումներ, որոնք ակնհայտորեն արդյունք են Ջուղայի բարբառի և Արարատյան բարբառի Նախիջևանի ու Աստապատի խոսվածքների, ինչպես նաև Խոյի, Արցախ-Սյունիքի բարբառների մերձակա խոսվածքների, Ճահուկ-Վայքի միջբարբառի միջև տեղի տեղի ունեցած բարբառամիջյան շփումների: Հետևաբար, նկատելի է Ջուղա գյուղի խոսվածքի խառը (անցումային) բնույթը:

### *Հավելված*

#### **Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ՍՈՒՏԱՄԱՆԸ» ՀԵՔԻԱԹԸ ՋՈՒՂԱ ԳՅՈՒՂԻ ԵՎ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՎ**

#### **Սուտասանը**

#### **(Ջուղա գյուղի խոսվածքով)**

Ընըմ ա, չինըմ, մի թաքավոր ա ընըմ: Էս թաքավորը հուրան յերգրըմը հայտարարըմ ա. «Օվ օր նենց սուտ ասի, օր յէս ասիմ՝ սուտ ա, իմ թաքավորությունի կէսը կըտամ հուրան»:

Կոլըմ ա մի չօբան: Ասըմ ա.

- Թաքավորն ապրած կէնա, իմ խէրը մի դ՞գ՞նակ ուներ, օր ըստեղուց լարըմ էր, յերգընքըմ աստղղնին խառնըմ էր:

- Կըպատահի,- ասըմ ա թաքավորը:- Իմ պապին էլ մի չիբուխ ուներ. մի ծէրը պէրանին էր տընըմ, էն մի ծէրն էլ լարըմ էր, արէվից վ՞ոռմ:

Սուտ խօսացողը կըլուիսը քօրէլօվ տուս ա կոլըմ:

Կոլըմ ա մի դ՞րօղի: Ասըմ ա.

- Նէրադութուն, թաքավո՛ր, յէս պըտի շուտ կոլի, յէտացամ: Հէրէկ շատ անձրէվ յէկավ, կէծակնին տըրաքան, յէրգինքը ճըղվավ, կընացել ի կըրկատէլու:

- Խա, լէվ աս արէլ,- ասըմ ա թաքավորը,- համա լէվ չիր կըրկատէլ. էս առավօտը մի քիչ անձրէվ յէկավ:

Էս էլ ա կընըմ:

Մըտըմ ա մի ախկատ կէղացի՝ կոտը կըռնի տակին:

- Տու ի՞նչ աս ուզըմ, ա՛յ մարթ,- իսարցընըմ ա թաքավորը:

- Ինձ մի կոտ վնակի աս պառտկ, յէկէլ ամ տանիմ:

- Մի կոտ վնակի՞,- զարմանըմ ա թաքավորը:- Սուտ աս ասըմ, յէս քէզ վնակի պառտկը չիմ:

- Թէ վօր սուտ ամ ասըմ, թաքավորութընիտ կէսը տուր:

- Չէ՛, չէ, դօզ աս ասըմ,- խօսկը փօխըմ ա թաքավորը:

- Օր դօզ ամ ասըմ՝ մի կոտ վնակին տուր:

*Գրանցել է Դարիկո Կոստանդյանը 1982թ.:*

*Բարբառախոս՝ Ծաղիկ Աղամալյան (ծնվ. 1908թ.. Ջուղա):*

Սուտասանը

(Նոր Ջուղայի խոսվածքով)

Յըլնում ա, չի յըլնում, մի թաքավոր ա յըլնում: Էս թաքավորը հուր յէրգըմըն հայտարարում ա. «Օվ վօր նէնց սուտ ասի, վօր յէս ասեմ՝ սուտ ա, իմ թաքավորութունի կէսը կըտամ հուրըն»:

Գ՛ ոլման ա մի չօբան: Ասում ա.

- Թաքավորն ապրած կենա, իմ խէրը մի դագանակ ունէր, վօր ըստէղից ձ՛ըքում էր, յէրգընքում աստըղերին խառնում էր:

- Կըպատահի,- ասում ա թաքավորը:- Իմ պապն էլ մի չիբուխ ուներ. մի ծերը բ'երնին էր դ'ընում, էն մի ծերն էլ պախում էր արելին, վառում:

Սուտասանը գ'ըլուխը քորումա, դ'ուս ա գ'ոլման:

Գ'ոլման ա մի դ'երցակ: Ասում ա.

- Ներադուրթուն, թաքավո՛ր, յէս պըտի շուտ գ'ոյի, ուշացա: Հերէկ շատ անձրեկ յէկավ, կէծականին տըրաքեցին, յերգինքը ճըղվեց, գ'ընացել ի կարկատելու:

- Խա, լավ աս արէ,- ասում ա թաքավորը,- համա լավ չիր կարկատել. էս առավօտ մի շուր անձրեկ յէկավ:

Էս էլ ա գ'ընում:

Մըտնում ա մի ախկատ գէղացի՝ կոտը կըռան տակին:

- Դ'ու ի՞նչ աս ուզում, ա՛յ մարդ,- խարցընում ա թաքավորը:

- Ինձ մի կոտ վոսկի աս պառտք, յէկել ամ տանեմ:

- Մի կոտ վոսկի՞,- զարմանում ա թաքավորը:- Սուտ աս ասում, յէս քեզ վոսկի տալիք չեմ:

- Թէ վօր սուտ ամ ասում, թաքավորութունիտ կէսը տուր ինձ:

- Չէ՛, չէ, ճիշտ աս ասում,- խօսկը փօխում ա թաքավորը:

- Վօր ճիշտ ամ ասում՝ մի կոտ վոսկին տուր:

*Գրանցել է Արտակ Վարդանյանը 2010թ.:*

*Բարբառախոսներ՝ Ավո Հովհաննիսյան (ծնվ. 1940թ., Նոր Զուղա),*

*Ժենիկ Եղիզարյան (ծնվ. 1945թ., Նոր Զուղա):*

**Vardanyan Artak – Observations on the Jugha dialect from a diachronic point of view.**– The dialect of Old Jugha has been preserved almost without flaws in New Jugha, however, an interesting change has occurred in the consonant system of the village of Jugha, located near Old

Jugha – the four-row consonant system of the subdialect has turned into a three-row one – aspirated voiced at the beginning of a word have turned into voiceless ( $p' q' \eta' \acute{a}', \acute{z}' > \text{ц}, \text{қ}, \text{н}, \delta, \acute{a})$ , and in the middle of a word and at the end of words – into simple voiced or voiceless ( $p' q' \eta' \acute{a}', \acute{z}' > p, q, \eta, \acute{a}, \acute{z}$  or  $\text{ц}, \text{қ}, \text{н}, \delta, \acute{a})$ , the diphthongs  $\text{t}$  and  $\text{n}$  have been partially preserved, palatal vowels, which are not characteristic of the Jugha dialect, are evident not only in borrowed words, but also in native Armenian words.

Opposite the most commonly used particle  $\acute{u}h\text{p}$ , which forms the plural, there is a particle  $\acute{u}h$ : Verbs of conjugation  $\text{t}\text{q}$  in the infinitive form have the ending  $\text{h}\text{q}$ . Formations with the ending  $\text{ufu}\text{t}$  of monosyllabic verbs of the indicative mood disappeared in the middle of the last century, they were replaced by forms with  $\text{puf}$ .

Along with obvious lexical communities, there are also certain differences.

The above-mentioned deviations in dialectal features are undoubtedly the result of interdialectal relations that take place between Jugha and Ararat, Khoy and other nearby dialects.

**Keywords:** Territory of Nakhijevan, province Goghtn, Jugha dialect, dialect of village Jugha, Nor Jugha dialect, dialectal features, mutual influence of features.

**Варданян Артак – Наблюдения о Джугинском диалекте с диахронической точки зрения.**– Джугинский диалект почти без изъяна сохранился в Новой Джуге, однако в системе согласных говора села Джуги, находящегося вблизи Старой Джуги, произошло ряд интересных изменений.

Четырехрядная система согласных диалекта превратилась в трехрядную – придыхательные звонкие в начале слова превратились в глухие ( $p' q' \eta' \delta', \varrho' > \psi, \phi, \iota, \delta, \delta'$ ), а в середине слова и в конце слов – в простые звонкие или глухие ( $p' q' \eta' \delta', \varrho' > p, q, \eta, \delta, \varrho$  или  $\psi, \phi, \iota, \delta, \delta'$ ), дифтонги  $t$  и  $n$  сохранились частично, налицо не характерные для Джугинского диалекта палатальные гласные не только в заимствованных словах, но и исконно армянских словах.

Напротив самой употребительной частицы  $\acute{u}hr$ , образующей множественное число, налицо частица  $\acute{u}h$ : Глаголы сопряжения  $h$  в неопределенной форме имеют окончание  $hl$ . Образования с окончанием  $\acute{u}sh\acute{u}$  односложных глаголов изъявительного наклонения исчезли в середине прошлого века, их заменили формы с  $hl$ .

Рядом с очевидными лексическими общностями налицо также определенные различия.

Вышеуказанные отклонения диалектных признаков, несомненно, являются результатом междиалектных отношений, имеющих место между Джугинским и Араратским, Хойским, а также другими близлежащими диалектами.

**Ключевые слова:** Территория Нахиджевана, провинция Гохтн, Джугинский диалект, говор села Джуга, Норджугинский говор, диалектные признаки, взаимовлияния признаков.